«ՈՂՋՈՒՅՆ»

«Ինչպե՞ս կարող ես ասել՝
«Հայր մեր, թող մեզ մեր պարտքերը», եթե քո սիրտը լի է թշնամանքով:
Ուստի, Հաղորդությունից առաջ բոլոր քրիստոնյաները
պետք է փոխադարձ համբույրով հաստատեն իրենց սերը»:
Սուրբ Կիպրիանոս Կարթագենացի- III դ. (De Dominica Oratione, 23)

Պատարագի ընթացքում հնչող «Ողջույն»-ը (լատ.՝ osculum pacis- խաղաղության համբույր) հնագույն եկեղեցական արարողակարգ է, որը խորհրդանշում է քրիստոնեական սերը եւ համերաշխությունը հավատացյալների միջեւ, արտահայտում է ներման եւ հաշտության խորհուրդը՝ հիշեցնելով, որ պետք է ներել եւ սիրով մոտենալ միմյանց, նաեւ նախապատրաստում է հավատացյալին՝ ընդունելու Սուրբ Հաղորդության խորհուրդը: Այս արարողությունը ոչ միայն հայկական եկեղեցու Պատարագի մաս է, այլեւ առկա է Կաթոլիկ եւ Ուղղափառ եկեղեցիների պատարագների կարգերում:

Պողոս առաքյալն իր թղթերում մի քանի անգամ հիշատակում է «սուրբ համբույրը», որը պետք է փոխանակեին քրիստոնյաները՝ ի նշան սիրո եւ եղբայրության. «Սուրբ համբույրով ողջունե՛ք միմյանց» (Հռոմ. 16:16): Նույն նախադասությունը հանդիպում է նաեւ Ա Կորնթ. 16:20, Բ Կորնթ. 13:12, Ա Թես. 5:26 համարներում: Ընդհանրական թղթերից «սուրբ համբույր» արտահայտությունը հանդիպում է միայն Ա Պետրոսի 5:14-ում. «Ողջունե՛ք միմյանց սիրո համբույրով: Խաղաղություն ձեզ բոլորիդ, որ Քրիստոս Հիսուսի մեջ եք»:

Երբ Սուրբ Հաղորդության ընծաները (հացն ու գինին) հանգչում են Սուրբ Սեղանին, Սարկավագը Սուրբ Սեղանից հայտարարում է. «Ողջունե՛ք միմյանց սուրբ համբույրով. եւ դուք, որ չեք կարող մասնակցել այս աստվածային խորհուրդին, դուրս եկեք դռների մոտ, աղոթեք»: Մինչ երգչախումբը երգում է «Քրիստոս մեր մեջ հայտնվեց...», ատյանում կանգնած ավագ հոգեւորականներից մեկին մոտենում է բուրվառակիր սարկավագը եւ խնկարկում հոգեւորականին՝ փոխանցելով Տիրոջ Հայտնության ողջույնը: Սուրբ Սեղանից Պատարագիչը Սուրբ Խաչի նշանով խաղաղություն է փոխանցում Ատյանում կանգնած հոգեւորականին, որը օրինություն է ստանում, եւ դառնալով դեպի մարդիկ՝ նրանց փոխանցում «Ողջույնը»՝ աջը դնելով նրանց գլուխներին, որից հետո հավատացելոց դասը մեկը մյուսին է ավետում ողջույնը. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, // Օրհնեալ է Յայտնութիւնը Քրիստոսի»:

Այս պահը Պատարագի երրորդ հատվածում է, որը կոչվում է Հավատացելոց Պատարագ: Սկզբում հնչում է երախաներին (Ս. Մկրտության պատրաստվողներին եւ չմկրտվածներին), թերահավատներին, ապաշխարության մեջ գտնվողներին սարկավագի ուղղված հորդորը՝ դուրս գալու գավիթ, քանզի սկսվում է Սուրբ Պատարագի բուն խորհուրդը:

Ընդհանրական Եկեղեցու 12 հայրերից սուրբ Հովհան Ոսկեբերանն իր քարոզներում բազմիցս ընդգծել է, որ Պատարագի ժամանակ երգվող «Ողջույնը» ցույց է տալիս, թե որքա՜ն կարեւոր է քրիստոնյաների համար սիրով եւ ներողամտությամբ վերաբերվել միմյանց՝ առանց հաշվի առնելու մարդկային դասակարգումներն ու սոցիալական անհավասարությունը: Քրիստոնյաները պետք է ապրեն խաղաղությամբ եւ եղբայրական սիրով, քանի որ հենց այդ կերպ նրանք կարտահայտեն իրենց հավատը: Սուրբ Հայրապետն իր մերձավորներին կոչ է արել ապրել միմյանց հետ խաղաղությամբ, նույնիսկ եթե նրանց միջեւ ինչ-որ տարաձայնություններ կան, քանի որ

խաղաղությունն է, որ իրականացնում է Աստծո թագավորությունը երկրի վրա: Խաղաղությունը ծագում է միայն Աստծո սիրո ճառագումից, եւ քրիստոնյաները պետք է հավատարիմ լինեն այդ աստվածաբուխ, հաստատուն խաղաղությանը: Սուրբ Աթանաս Մեծը հենց այսպես էլ ձեւակերպել է խաղաղության բնույթը. «Խաղաղությունը Աստծո երկնային պարգեւն է, այն միայն նրանք են գտնում, ովքեր ապրում են աստվածապաշտությամբ եւ սիրով»:

Հետաքրքրական է, որ եբրայերենում «խաղաղություն-շալոմ» (եբր.՝ שָׁלוֹם) բառը ունի շատ ավելի լայն նշանակություն, քան պարզապես «արտաքին խաղաղություն» իմաստը: «Շալոմը» վերաբերում է նաեւ ներքին ներդաշնակությանը, բարեկեցությանը, լիարժեքությանն ու բարոյական կատարելությանը: Այն ոչ միայն պատերազմի բացակայություն է, այլեւ մարդու ամբողջական վիճակը, որն ընդգրկում է մտային, մարմնական եւ հոգեւոր առողջությունը: Դա Աստծո կողմից մարդուն տրված խորը հոգեւոր ապրում է՝ ոպես բացարձակ բարօրություն եւ հոգեւոր կայունություն: Մարդու ներքին խաղաղությունը նաեւ կապված է հասարակական խաղաղության հետ: Աստված սպասում է, որ մարդիկ ողջամիտ կյանք վարեն եւ գործեն ի նպաստ համայնքային բարեկեցության (տե՛ս Երեմ. 29:1):

Եկեղեցու ուսմունքի համաձայն՝ երբ մարդը հոգեւոր ճանապարհորդության մեջ է, ձգտելով մոտենալ Աստծուն, նա զգում է այն խաղաղությունը, որը կախված չէ աշխարհային վիճակներից, այլ միայն Աստծո կամքից: Ահա այսպես է բացատրում սուրբ Պողոսը. «Եվ Աստծու խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով կպահպանի» (Փիլիպ. 4:7):

Հիսուս Քրիստոս մշտապես քաջալերում էր իր հետեւորդներին՝ ապրելու խաղաղության մեջ. «Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ես այն ձեզ չեմ տալիս, ինչպես աշխարհն է տալիս. ձեր սիրտը թող չխռովվի ու չվախենա» (Հովհ.14:27): Քրիստոս խոսում է այն խաղաղության մասին, որն ուղեկցում է մարդուն, երբ նա մաքրվում, ազատագրվում է մեղքերի բեռից, ապավինում է Աստծո զորությանը եւ ողորմությանը եւ հետեւում Նրա օրինակին:

Խաղաղության ողջույնը Քրիստոսի արքայության մեջ կարեւոր տեղ ունի: Եկեղեցին իր ծիսական արտահայտությամբ մեզ հենց դա է բացատրում: Խաղաղությամբ Հիսուսի հետ թշնամության պատը վերանում է, անհետանում են անհասկացողություններն ու բաժանումները եւ տիրում է Աստծո հաշտությունը:

Պատարագի ընթացքում փոխանցվող «Ողջույնը» դառնում է եւ՛ ներքին խաղաղության ամրապնդման, եւ՛ միջանձնային, համայնքային համերաշխության հիմք: «Ողջույնի» կարեւորությունն առաջին հերթին նրանում է, որ այն ցույց է տալիս քրիստոնյաների համերաշխությունը եւ միասնականությունը, եւ դա նշանակում է, որ հավատացյալները միավորվում են Աստծո եւ միմյանց հետ խաղաղության մեջ: Այդ պահն արդեն հիացման եւ սրբության զգացումի ամբողջացումն է, քանի որ ժողովուրդը ոչ միայն ողջունում է սուրբ համբույրով, այլեւ դպրաց դասի հետ, «սրբաբան» սերովբեների օրինակով, գոհաբանում սիրասփյուռ Աստծուն:

Համբույրը, որը փոխանցվում է հավատացյալների միջեւ, ոչ միայն ֆիզիկական գործողություն է, այլ նաեւ հոգեւոր ապրում: Դրանով փոխանցվում է Աստծո խաղաղությունը՝ յուրաքանչյուր հավատացյալի սիրտը պատրաստելով Քրիստոսի Սուրբ Մարմնի եւ Արյան ճաշակմանը: Այդ համբույրը մարմնավոր դրսեւորումից առավել արտահայտում է այն հոգեւոր կապը՝ ցույց տալով, որ համատեղ աղոթքն ու պատարագը ուժեղացնում են հավատացյալների հավատքն ու Աստծո հետ հաղորդակցությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Roy Joseph Deferrari**, *The Fathers of the Church*, (1959), *Genera editor, Sermons on the Liturgical Seasons, vol. 38, p. 175.*

2. **Jungmann Joseph,** *The Mass of the Roman Rite: Its Origins and Development*, (1951), Milwaukee: Benzinger Brothers. pp. 327–328.

3. https://www.armenianorthodoxtheology.com/post/the-kiss-of-peace